ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Կարեն Սարգսյան

ՀՀ ֆինանսների նախարարի խորհրդական:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Սլովենիայի Հանրապետություն (ք. Լյուբլյանա)՝ 2025 թվականի փետրվարի 10-ից մինչև 14-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը.

«ֆինանսների գերազանցության կենտրոն» (“Center of Excellence in Finance”-CEF):

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն «Գիտելիքի կառավարման ճանապարհային քարտեզները ի նպաստ փոփոխությունների օրակարգին» աշխատարանին:

5. Քննարկված թեմաները

- Գիտելիքի կառավարում և ուսուցանվող կազմակերպության սկզբունքները հանրային հատվածի ինստիտուտներում
- Կառուցվածքային բարեփոխումների մարտահրավերների բացահայտում
- Գիտելիքի և փորձի ձեռքբերում, համակարգում և փոխանցում
- Գիտելիքի կառավարման հետազոտությունից եզրահանգումներ, ներառյալ ուսուցման ոճերը և գիտելիքների փոխանցման խոչընդոտները
- Համայնքի փորձառությունը գիտելիքի կառավարման հարցում

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հնարավորություն ընձեռվեց մշակել գիտելիքի կառավարման ճանապարհային քարտեզ, ներկայացնել գիտելիքի փոխանակման միջամտություն և սովորել տարբեր խորհուրդներ և հնարքներ արդյունավետ փոխանակման համար:

Կազմակերպված աշխատարանի ժամանակ անցկացվում էին ինչպես անհատական այնպես էլ խմբային աշխատանքներ, որի արդյունքները ներկայացվում էին մասնակիցներին: Դրանցից էր նաև ՀՀ ֆինանսների նախարարությունում փոփոխությունների կառավարման գործընթացում փորձի փոխանակման վարժությունը, որտեղ մասնակիցները ծանոթացան հնարավոր ռիսկերին և մարտահրավերներին:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Աշխատարանի շրջանակներում հանդիպումներ չեն եղել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Աշխատարանից հետո տեղի է ունեցել հանդիպում կազմակերպության ղեկավարի և այլ աշխատակիցների հետ, որին առցանց միացել էր նաև Միլենա Հովհաննիսյանը՝ քննարկելու հնարավոր համագործակցության շրջանակը, որը հիմնվել է նախապես կատարված աշխատանքների, համատեղ փոխանակված գրագրության և տեխնիկական առաջադրանքի վրա:

Մեզ համար կարևոր մի քանի պայմանավորվածություններ, որոնք ձեռք բերվեցին հանդիպման ավարտին.

- Համաձայնեցնել ևս մեկ անգամ ՀՀ ֆինանսների նախարարի հետ կազմակերպության հետ աշխատանքը և պատրաստել նամակ Սլովենիայի ֆինանսների նախարարին

Պատասխնատու՝ Միլենա Հովհաննիսյան

Ժամկետներ՝ 14 օր

Ակնկալվող արդյունք՝ աջակցության նամակ

- Զուգահեռ այս գործընթացին շարունակել փնտրել այլ միջոցներ տարբեր դոնոր կազմակերպություններից, և արդեն իսկ սկսվել է մի քանիսի հետ բանակցությունները, ինչը կունենա որոշակի արդյունք

Պատասխնատու՝ Կարեն Սարգսյան

Ժամկետներ՝ 14 օր

Ակնկալվող արդյունք՝ բանավոր հաստատում

- Ստացված գիտելիքի հիման վրա մեկ երկու գործիքակազմը ներդնել ՀՀ ֆինանսների նախարարությունում և տեսնել թե ինչպես են գործնականում աշխատում դրանք

Պատասխնատու՝ Կարեն Սարգսյան

Ժամկետներ՝ 14 օր

Ակնկալվող արդյունք՝ մեկ ոլորտի մասով գիտելիքի փոխանակման ճանապարհային քարտեզ

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Կարեն Սարգսյան

18.01.2025թ.